ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ ՖԵՈԴԱԼԱԿԱՆԱՑՈՂ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«ԶԵՌԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ» ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

Սովետահայ պատմագրության դժվարին և քիչ ուսումնասիրված խնդիրներից մեկն է Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների ձևավորման հարցը։ Խնդրի նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանը (ինչպես և Առաջավոր Ասիայի այն երկրները, որոնք գտնվում էին Հռոմեական կայսրության ոլորտում) ներքին կյանքում ապրում էր այն ճգնաժամը, որ հատուկ էր հելլենիստական երկրներին մ. թ. ա. առաջին դարերում։ Հարցիս ուսումնասիրությունը ունի կարևոր նշանակություն ընդհանուր պատմագրության համար, քանի որ Առաջավոր Ասիայի արևմտյան մասում ստրկատիրական հասարակարգի ճգնաժամի խորացումը և ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը ամենացայտուն արտահայտություն գտան Մեծ Հայքի թագավորության մեջ։ Խոսելով ֆեոդալական հարաբերությունների ձևավորման առանձնահատկությունների մասին Հայաստանում, անհրաժեշտ է նշել նաև մի այլ կարևոր հանգամանք։ Ֆեոդալական հասարակարգի այսպես կոչված դասական ձևը Արևմտյան Եվրոպայում առաջացել է իբրև ներքին ճգնաժամ ապրող անտիկ հասարակարգի և «բարբարոսների» նվաճումների փոխազդեցության հետևանք, իսկ Հայաստանում այս պրոցեսները տեղի են ունեցել պատմական այլ պայմաններում։ Չնայած քաղաքական բարդ իրադրությանը, այնուամենայնիվ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման օրինաչափությունները այս ժամանակաշրջանում արտաքին ուժերի կողմից չէին խանգարվում։ Կարելի է ասել, որ III—IV դարերում Հայաստանում ձևավորվող ֆեոդալական արտադրական հարաբերությունները արդյունք էին հասարակության ընդերքում տեղի ունեցող օրինաչափ փոփոխությունների։

Ֆեոդալական հասարակարգի բնորոշման հիմնական հատկանիշներից մեկն է մասնավոր խոշոր հողատիրության առաջացումը։ Հողը, իբրև արտադրության հիմնական միջոց (նրա ժառանգական տերերի), կախման մեջ է դնում այդ հողի վրա նստած անմիջական արտադրողներին՝ շեներով-համայնքներով ապրող գյուղացիներին-շինականներին, որով և հիմնականում նշանավորվում է անցումը ստրկատիրությունից ֆեոդալական հասարակարգին։ Այդ անցումը դեպի նոր արտադրական հարաբերությունները իր արտահայտությունն է գտել առաջին հերթին հողային սեփականատիրության տարբեր ձևերի մեջ, որոնցից մեկն էր «ձեռական իշխանութիւն» կոչվող հողատիրության ձևը։

Աղբյուրներում հանդիպող «ձեռական իշխանութիւն» տերմինը ակադ. Հակոբ Մանանդյանը հասկացել է իբրև հոմանիշ «գործակալական» իշխանու-

թյան[1]։ Ստորև կտեսնենք, որ «ձեռական իշխանությունը», կապ ունենալով գործակալությունների հետ, իբրև հասկացողություն, այնուամենայնիվ, տարբեր է և նշանակում է ոչ թե գործակալություն, այլ գործակալությունը ստանձնած պաշտոնյայի ապահովությունը հողային տարածությամբ, իբրև հատուցում պետական ապարատում նրա ծառայության։ Բուն լուսաբանությունը այդ իմաստով ցույց է տալիս, որ այն վերաբերում է հողային սեփականատիրության որոշ ձևին, որը Հայաստանում նախորդել է ֆեոդալական խոշոր հողատիրության ձևավորմանը։

Նոր հասարակարգի ձևավորման ընթացքում առաջին հերթին հանդես են գալիս հին հասարակարգի ընդերքում գոյություն ունեցող այն տարրերը, որոնք իրենց մեջ պարունակում են նոր, ավելի պրոգրեսիվ հասարակարգին անցնելու նախադրյալները։ Ահա նման խթանի դերում է հանդես գալիս առաջին հերթին «ձեռական իշխանությունը»։ Հիրավի, մեզ հասած կցկտուր փաստերը ցույց են տալիս, որ «ձեռական» կոչված հողատիրության ձևը շատ ավելի հին է, քան ֆեոդալական հասարակարգը։ Այն առաջ է եկել Հին Արևելքի ռազմաստրկատիրական բռնապետությունների ընդերքում և այնուհետև շարունակել է հարատևել հելլենիստական հասարակարգի պայմաններում։

«Ձեռական իշխանությանն» առաջացումը սերտ կերպով կապված է գործակալությունների հետ, որոնց առկայությամբ էլ պայմանավորված էր նրա գոյությունը և նրանց վերացումով վերանում է նաև «ձեռական» կոչվող հողատիրության ձևը։

Մեծ Հայքի թագավորությունը կենտրոնացված ստրկատիրական միապետություն էր, որին բնորոշ էր արքունիքը՝ իբրև «բարձրագույն դուռ», «դուռն արքունի»։ Այնտեղ կենտրոնացված էր պետության կառավարման ապարատը՝ բաղկացած առանձին պաշտոններից, որոնք կոչվում էին գործակալություններ, իսկ պաշտոնյաները՝ գործակալներ։ Գործակալությունների մասին հայ մատենագիրների մոտ պահպանված տեղեկությունները ցույց են տալիս, որ դրանք հիմնականում այն արքունական պաշտոններն էին, որ գոյություն ունեին հելլենիստական թագավորությունների արքունիքում[2]։

Գործակալությունների՝ իբրև պետական ապարատի հիմնական օղակի գոյությունը Մեծ Հայքի թագավորության մեջ նշմարվում է դեռևս Արտաշեսյանների օրոք, իսկ Արշակունիների ժամանակ այն ստանում է իր վերջնական ձևավորումը և վերանում է հիշյալ դինաստիայի վերացման հետ միասին։

«Ձեռական իշխանությանն» մասին մեզ հասած մատենագրական տեղեկությունները պահպանվել են գերազանցապես Փավստոս Բուզանդի մոտ։ Այդ տեղեկությունները ցույց են տալիս, որ գործակալությունները տրվում էին բարձր ավագանու ամենաազդեցիկ անձնավորություններին։ Յուրաքանչյուր գործակալի, իր պաշտոնը կատարելու համար իբրև վարձատրություն, տրվում էր որոշ տերիտորիա՝ գավառ, որը, ի տարբերություն տոհմա-ցեղային տերիտորիայի կամ ժառանգական կալվածքների, կոչվում էր «ձեռական երկիր» կամ «երկիր ձեռական իշխանությանն»։

---

1 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1930, էջ 76, 114, ծան. 1։ Նույնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 331։

2 С. Т. Еремян, Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1948, № 11, էջ 69։

«Ձեռական իշխանությունը» տվյալ գավառում պատկանում էր բարձր աստիճանում այս կամ այն անձնավորությանը, քանի դեռ նա վարում էր իր ստանձնած գործակալությունը։ Նրա պաշտոնը ուրիշին հանձնվելու դեպքում տվյալ գավառի «ձեռական իշխանությունը» անցնում էր նոր անձնավորության։ Սակայն ժամանակի ընթացքում բոլոր գործակալությունները դառնում են համապատասխան նախարարական տոհմերի ժառանգական արտոնություն, ուստի «ձեռական իշխանության» գավառները ևս միացվում են նրանց ժառանգական դարձած տերիտորիաներին և «ձեռական իշխանությունն» հասկացողությունը հետզհետե վերանում է։ Ֆեոդալական հարաբերությունների ձևավորման ավարտի ժամանակաշրջանում՝ IV—V դարերում, «ձեռական իշխանությունը» գոյություն ուներ իբրև վերապրուկ։ Ահա թե ինչու հայ մատենագրության մեջ պահպանված կցկտուր տեղեկությունները «ձեռական իշխանության» մասին վերաբերում են այդ ժամանակաշրջանին, այն էլ կաթողիկոսի և մասամբ վերջին հայ Արշակունիների կալվածքներին։

«Ձեռական իշխանության» մասին տրված մեր բացատրությունը հնարավորություն է տալիս մեկնաբանելու Տակիտոսի Տրդատ Ա Արշակունու գահակալման հանգամանքների հետ կապված հաղորդումը։ Տրդատ Ա Արշակունու գահակալման սկզբնական շրջանում նրա «Մեծ թագաւոր Հայոց Մեծաց» լինելը, այսինքն՝ պարթևական արքունիքում Արշակունիների «երկրորդական գահը» պաղեցնելը, ըստ երևույթին, դիտվում էր իբրև գործակալություն, որի համար Հայոց թագավորը ստանում է «երկիր ձեռական իշխանության»։ Մ. թ. 54 թ., երբ պարթևական թագավոր Վաղարշ Ա-ի (51—80) կողմից նրա եղբայր Տրդատը բարձրացվեց հայկական գահին, Մեծ Հայքի թագավորության տերիտորիան դեռևս գտնվում էր Հռոմեական կայսրության հսկողության ներքո։ Այն անհրաժեշտ էր նվաճել, իսկ մինչ այդ Հայոց թագավոր համարվող Տրդատի նստավայրն էր Մծբին քաղաքը, որն իր Արվաստան գավառով մի ժամանակ Մեծ Հայքի մասն էր, սակայն Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության միջև 37 թ. կնքված համաձայնագրով այն անցել էր Պարթևաստանին, ապա միացվել Ադիաբենեի սահմանամերձ փոքրիկ թագավորությանը։ Հայոց թագավորի ժամանակավոր նստավայր Մծբինը դարձել էր պարթևական և հայկական ռազմական ուժերի կենտրոնավայր, որտեղից մի քանի տարի հետո դաշնակից հայերն ու պարթևները պիտի անցնեին վճռական հակագրոհի Հայաստանի կենտրոններում բուն դրած հռոմեացիների և նրանց դրածոների դեմ։

«Ձեռական իշխանության» հասկացողության պարզաբանումը մեզ հնարավորություն է տալիս պարզելու նաև մի այլ տերիտորիայի խնդիրը, որը գահակալման ժամանակ տրվել էր Տրդատին։ Պարզվում է, որ վերջինս, նստելով Մծբինում, իբրև ժամանակավոր նստավայրում, հողեր էր ստացել նաև Ատրպատականում, այն մասում, որը անմիջապես սահմանակից էր Մեծ Հայքին։ Այդ երկրամասն էր Թավրիզից և Սոհանդ գագաթից դեպի արևմուտք մինչև Կապուտան (Ուրմիա) լիճը ձգվող տափարակ տերիտորիան, որը մի ժամանակ Ուրարտուի թագավորության տերիտորիայի մասն էր եղել, իսկ այժմ առանձնացվել էր Ատրպատականի թագավորությունից և իբրև «երկիր ձեռական իշխանության» տրվել Տրդատին։ Ահա այստեղից նա պետք է իր զորքերով ներխուժեր Հայաստանի սիրտը՝ Երասխի հովիտը, Արտաշատ մայրաքաղաքին տիրելու համար։ Այս էր պատճառը, որ Կորբուլոնի հետ առաջին անհաջող ընդ-

հարումից հետո Տրդատը նահանջեց դեպի հարավ՝ սահմանակից Ատրպատականը, որտեղ թագավոր էր նրա կրտսեր եղբայր Բակուրը։ Այսպիսով՝ մ. թ. ա. 54 թ., երբ Տրդատը Վաղարշի կողմից բարձրացվեց հայկական գահին, Մեծ Հայքին միացվեց Ատրպատականի մասը կազմող մի ընդարձակ տերիտորիա, որը IV դարում դեռևս հայտնի էր իբրև «Զեռին իշխանութեան տանն Հայոց թագավորին, որ էր զԱստրպայական աշխարհաւն» (Փավստոս, Դ, Մ)[3], որը մի այլ տեղ Փավստոսը (Ե, Ը) անվանում է «Ատրպատճաց գաւառ»[4]։

«Հայոց թագավորի ձեռական իշխանության տունը Ատրպատական աշխարհում» կոչվող տերիտորիան Հ. Մանանդյանը իրավացիորեն տեղադրում է Կապուտան (Ուրմիա) լճի հյուսիս-արևելյան մասում, Ատրպատականի կենտրոն Գանձակ Շահաստան քաղաքից հյուսիս, որը, ինչպես տեսանք, կոչվել է «Ատրպատճաց գաւառ»[5]։ Նշված տերիտորիան մնում էր Մեծ Հայքից դուրս և պատկանում էր անձամբ Տրդատ Ա-ին, իսկ նրանից հետո՝ Հայաստանում թագավորած բոլոր Արշակունի գահակալներին։ Փավստոսի տեղեկություններից երևում է, որ այս կարգը պահպանվում էր նաև Սասանյանների ժամանակ, ըստ երևույթին, մինչև Մեծ Հայքի թագավորության բաժանումը 387 թ., կամ թերևս մինչև հայ Արշակունիների դինաստիայի վերացումը 428 թ.։ Սակայն ավանդույթի ուժը այնքան մեծ էր, որ միջին դարերում ևս (IX—XI դդ.) արաբական հեղինակների մոտ Հայաստանի սկիզբը համարվում է Դեհ-Խառականի շրջանը[6], այսինքն մեր կողմից մատնանշված տերիտորիան Կապուտան (Ուրմիա) լճի հյուսիս-արևելյան ափերին։

Մեզ տեղեկություններ են հասել, որ հայ Արշակունիները կալվածքներ են ունեցել նաև Հռոմեական կայսրության սահմաններում՝ Կապադովկիայում, սակայն նրանց տեղադրությունը որոշել հնարավոր չէ։ Անշուշտ, Հռանդեայի դաշնագրից և Հռոմում թագադրվելու հանդեսներից հետո պիտի Տրդատ Ա-ը ներոն կայսրից ստանար այդ՝ մեզ համար անհայտ երկրամասը, որը մնաց Մեծ Հայքի գահակալների տնօրինության ներքո մինչև Հայաստանի բաժանումը 387 թ.։ Այնուհետև այդ տերիտորիան կարող էր պատկանել Բարձր Հայքի Զրմեռ ավանում նստող Արշակ Գ-ին, սակայն նրա մահից (391 թ.) և Հռոմեական մասում Արշակունիների դինաստիայի վերացումից հետո նրանց «ձեռական իշխանութեան» հողերը հավանաբար գրավվել են հարքունիս կամ տրվել մեկ ուրիշ վասալի։ Մենք այլ տեղեկություններ չունենք որևէ ուրիշ ենթադրություն անելու։

Այսպիսով, հայ Արշակունիների վերացումով վերանում է նաև նրանց ձեռական իշխանության տերիտորիան։ Նույն բախտն էր վիճակված կաթողիկոսական տան ձեռական իշխանության տերիտորիային։ Այս տերիտորիայի գոյության մասին հիշատակում է նույն Փավստոս Բուզանդը։ «Զայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն. զի հնդետասան գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իբրև սեպհական ի բնէ, առանձին առոշոդի նոցա էր կարգեալ»։ Այնուհետև Փավստոսը թվարկում է Լուսա-

---

3 «Հայոց թագավորի ձեռական իշխանության տունը (երկիրը) Ատրպատական աշխարհում»։ Փավստոսի աշխարհարար թարգմանության մեջ (Երևան, 1968, էջ 207) այս տեղը թարգմանված է. «Հայոց թագավորական տան սեփական իշխանությունը Ատրպատական աշխարհում»։

4 Նույն տեղում։

5 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, Պատմութիւն Հայոց, V, Ը, ՍՊԲ, 1883, էջ 175։

6 V. Minorsky, Hudūd al-Alam, London, 1937, էջ 143, 395։

վորչի տան «ձեռական իշխանութիւն» համարվող գավառները. «Եւ յայն գաւառ գլխաւոր գաւառք այս էին. Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծովք և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ նորօք» (Փավստոս, IV, ԺԴ. էջ 117)։ Հ. Մանանդյանը ընդհանուր առմամբ ճիշտ է, երբ նշում է, որ այս վկայությունից չի կարելի ենթադրել, թե «վերոհիշյալ 15 գավառները պատկանել են կաթողիկոսներին իբրև տոհմային սեփականություն»[7]։ Նրա բացատրությամբ այս վկայության մեջ «ձեռական իշխանութիւն» է անվանված «մեծի դատաւորութեան» գործակալությունը, որը «սեպհական» էր, այսինքն՝ ժառանգական և տոհմային, իբրև կաթողիկոսական տան հանձնված առանձին կամ «առոշոգի» իշխանություն[8]։ Հ. Մանանդյանի բացատրությունը լուսաբանում է հարցի միայն մի կողմը. Լուսավորչի տոհմը իբրև կաթողիկոսական տոհմ, որին հանձնված էր «մեծի դատաւարութեան» գործակալությունը, կալվածքներ ուներ Փավստոսի կողմից թվարկված գավառներում։ Սակայն մեջ բերված բնագրում նշված են երկու կարգի գավառներ. Դարանաղի, Բզնունիք, Ծոփք գավառները, որոնք տրվել էին Լուսավորչի տանը IV դարի ընթացքում տարբեր պարագաներում, կազմում էին նրանց ժառանգական սեփականությունը, իսկ արքունի ոստան հանդիսացող Այրարատում[9] նրանց տրվել էին «ձեռական իշխանութեան» հողեր «մեծի դատաւարութեան» գործակալությունը գլխավորելու համար։

Հետագայում՝ 387 թ. հետո, երբ Մեծ Հայքի միացյալ պետությունը մասնատվեց երկու մարտնչող աշխարհակալությունների միջև, և երկրի Միջնաշխարհը ստացավ իր նոր վարչաձևը իբրև Սասանյան Իրանին ենթակա երկիր, գործակալությունների մեծ մասը վերացավ և նրա հետ միասին վերացան Արշակունիների և կաթողիկոսի տան «ձեռական իշխանութեան» կարգով ստացված կալվածքները։ Բացի այդ անհրաժեշտ է նշել, որ այս ժամանակաշրջանում քրիստոնեական եկեղեցին Հայաստանում Սասանյանների կողմից դիտվում էր իբրև թշնամի տերության՝ Արևելյան Հռոմեական կայսրության քաղաքական շահերը պաշտպանող հիմնարկ, ուստի պետության բոլոր միջոցառումները ուղղված էին հատկապես եկեղեցու դեմ։ Այս նույն ժամանակաշրջանում զարգանում է կուսակրոնությունը և վերանում է կաթողիկոսի գահին տիրանալու ժառանգական սկզբունքը։ Այսպիսով, Լուսավորչի տունը, որը շուրջ մեկ դար հսկայական կալվածքների տեր էր, այժմ պիտի զրկվեր նրանցից։ Կանխելու համար հողային տիրույթների անխուսափելի կորուստը, Սահակ Պարթև կաթողիկոսը (388—439) շտապում է իր տոհմի բոլոր երկրամասերը կտակել Մամիկոնյաններին, որոնք մոր կողմից հանդիսանում էին Լուսավորչի օրինավոր ժառանգները։ Այլ գավառներում առաջ են գալիս նոր նախարարական տներ։ Նույն ձևով Աղբիանոսյան եպիսկոպոսական տոհմի երկրամասերը դառնում են նրանց տոհմի աշխարհիկ անդամների ժառանգական սեփականությունը։

Ինչպես տեսնում ենք, Արշակունիների և կաթողիկոսական տան «ձեռական իշխանութեան» կարգով ստացված հողային հարստությունները վերանում են շնորհիվ նոր քաղաքական իրադրության։ Սակայն, անկախ քաղաքական

---

7 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 77։

8 Նույն տեղում։

9 Այրարատ ասելով Փավստոսը նկատի ունի Լուսավորչի տանը պատկանող Բագրևանդ գավառը։

հանգամանքներից, հողատիրության այդ ձևը վերանալու էր և դա պայմանավորված էր ֆեոդալական հարաբերությունների խորացմամբ։ Մենք ունենք անուղղակի փաստեր, որոնք ցույց են տալիս, որ ձեռական իշխանության կարգով ստացված երկրամասեր են ունեցել բոլոր այն նախարարական տները, որոնք կապված էին գործակալությունների հետ։ Օրինակ, Տայքը Մամիկոնյան նախարարական տան տոհմական սեփականությունն էր, որտեղ Էրախանի ամրոցում նստում էր այս տան «տանուտէրը» կամ «նահապետը», որ տարիքով ավագագույն ներկայացուցիչն էր։ Իսկ տան «աւագ սեպուհը» սովորաբար ստանձնում էր Հայոց սպարապետի գործակալությունը և նրա նստավայրն էր Հղական ամրոցը Տարոնում։ Տարոնը, այսպիսով, Մամիկոնյան տան «ձեռական իշխանությունն» էր։ Ուրեմն գործակալությունների հետ կապված նախարարությունները պետք է ունենային երկու կարգի հողային կալվածքներ՝ «սեպհական» և «ձեռական»։ Բայց ժամանակի ընթացքում գործակալական իշխանությունները դառնում են այս կամ այն նախարարական տոհմի ժառանգական պատիվ, սրա հետ միասին ժամանակավորապես առաջացած «ձեռական» համարվող գավառները դառնում են ժառանգական և ժամանակի ընթացքում դանդես են գալիս իբրև տվյալ նախարարական տան տոհմական սեփականություն։ Բոլոր տեսակի պայմանական հողատիրությունը V դարի սկզբներին դարձել էր ժառանգական, ուստի մատենագիրները «ձեռական» հողատիրության մասին պահպանել են միայն պատահական տեղեկություններ։ Միայն հետո է, որ նախարարական հողատիրության մեջ առաջ եկած նոր մասնատման շնորհիվ առաջ են գալիս պայմանական հողատիրության նոր ձևեր, որոնց մասին մենք չենք խոսի, քանի որ այդ հարցը դուրս է գալիս մեր թեմայի սահմաններից։

Ինչպես տեսանք, «ձեռական իշխանությունը» գոյություն է ունեցել հնագույն ժամանակներում։ «Ձեռական իշխանությանն» տերիտորիաներ են եղել Հին Արևելքի այնպիսի պետություններում, ինչպիսին է Ասորեստանը։ Մեզ հայտնի է, օրինակ, արքունի տակառապետի «ձեռական իշխանությանն» տերիտորիան՝ «Կադմուխի երկիրը»[10], որը, ի դեպ, մինչև մ. թ. 37 թ. գտնվում էր Մեծ Հայքի կազմում։

«Ձեռական» տերմինի բառացի համանիշին մենք հանդիպում ենք վրացերենում՝ «սախելո» სახელო, որտեղից առաջացել է «սախելմծիփո» բառը, որ նշանակում է «պետություն», իսկ «խելմծիփե» (բառացի «ձեռնհաս») նշանակում է «թագաւոր»։ «Ձեռական» հասկացողությունը, իբրև «պաշտոնյա», «ձեռնաւոր» ձևով մնում է միջնադարյան Հայաստանում և նրա բառացի համանիշն է վրացերենում՝ «մոխելե» მოხელე բառը։ Այսպիսով, «ձեռական իշխանությունն» հասկացողությունը առաջ է եկել ֆեոդալական հասարակարգի առաջացումից շատ առաջ և վերացել է այդ հասարակարգի հետագա զարգացման հետևանքով։

---

10 Տե՛ս И. М. Дьяконов, Развитие земельных отношений в Ассирии, Л., 1949, էջ 77։ Կադմուխի երկիրը Մովսես Խորենացին հիշատակում է «Տուն Կադմեայ» ձևով, համապատասխանում է անտիկ հեղինակների Zabdicenae երկրին։

К ВОПРОСУ О СЛОЖЕНИИ УСЛОВНОГО ЗЕМЛЕВЛАДЕНИЯ В ФЕОДАЛИЗИРУЮЩЕЙСЯ АРМЕНИИ

Академик АН Арм. ССР С. Т. ЕРЕМЯН

(Резюме)

В исторических условиях Армении процесс вызревания феодальных отношений происходил в недрах позднеэллинистического общества. Последнее являлось дальнейшей эволюцией древневосточного общества, в котором основными производителями были рабы, лишенные средства производства, и общинники, обладавшие средствами производства. В роли эксплуататора рабов и общинников выступали крупные землевладельцы—военная и жреческая знать.

Уже в недрах древневосточного общества прослеживаются формы условного землевладения.

Государство, в лице восточного деспота—царя, юридически считалось собственником всей территории, над которой он царствовал и правомочен был за различные услуги представителям военной и жреческой знати передавать в пожизненное или наследственное пользование части территории с их населением. Эта форма условного землевладения, существовавшая также в позднеэллинистической Армении и сыгравшая определенную роль в сложении феодального землевладения и феодальных отношений вообще, в армянских источниках V столетия называется «дзеракан», что буквально означает «служилый».

В V в. процесс феодализации Армении в основном завершается и появляются новые формы условного землевладения, наряду с которыми архаичный «дзеракан» сохраняется в виде пережитка.